ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

20.02.2015թ.

ՈՐՈՇՈՒՄ N3

ՔԱՂՑՐԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԵՐԸ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 20-րդ կետի և Հայաստանի Հանրապետության«Հողային օրենսգրքի» 67-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով Քաղցրաշեն համայնքի ավագանին

ՈՐՈՇԵՑ՝

Թույլատրել համայնքի ղեկավարին օտարել համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքերը աճուրդով՝ հողամասերի համար մեկանրկային գին սահմանելով հողամասի կադաստրային արժեքի 100%-ից ոչ պակաս:

1.Արարատի մարզի Քաղցրաշեն համայնքի Դուրյան փողոց 36/3 հասցեում գտնվող արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0.06728հա հողամասը, հողատեսքը՝ Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, կադաստրային ծածկագիրը 03-097-0017-0041: Հողամասը օտարվում է 1 լոտով, որի մեկնարկային գինը սահմանել 544968(հինգ հարյուր քառասունչորս հազար ինը հարյուր վաթսունութ) դրամ:

2. Արարատի մարզի Քաղցրաշեն համայնքի Պ.Դուրյան փողոց 36/2 հասցեում գտնվող արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0.1հա հողամասը, հողատեսքը՝ Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, կադաստրային ծածկագիրը 03-097-0017-0038: Հողամասը օտարվում է 1 լոտով, որի մեկնարկային գինը սահմանել 810000(ութ հարյուր տաս հազար) դրամ:
3. Արարատի մարզի Քաղցրաշեն համայնքի Մ. Նալբանդյան փողոց 30/4 հասցեում գտնվող անասնաբուժարան շենքի՝ նրա զբաղեցրած և հարակից արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0.15281հա հողամասով, հողատեսքը՝ Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, կադաստրային ծածկագիրը 03-097-0017-0039: Անշարժ գույքը օտարվում է 1 լոտով, որի մեկնարկային գինը սահմանել 1862000(մեկ միլիոն ութ հարյուր վաթսուներկու հազար) դրամ, որից շինությունը՝ 623000 դրամ, հողամասը՝ 1239000դրամ:
4. Արարատի մարզի Քաղցրաշեն համայնքի Մ. Նալբանդյան փողոց 30/5 հասցեում գտնվող անասնաշենքի՝ նրա զբաղեցրած և հարակից արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0.05295հա հողամասով, հողատեսքը՝ Գյուղատնտեսական արտադրական օբյեկտների, կադաստրային ծածկագիրը 03-097-0017-0040: Անշարժ գույքը օտարվում է 1 լոտով, որի մեկնարկային գինը սահմանել 568000(հինգ հարյուր վաթսունութ հազար) դրամ, որից շինությունը՝ 138000դրամ,հողամասը՝ 430000դրամ:

1. Խ. Սահակյան կողմ
2. Գ. Փալիկյան կողմ
3. Հ. Հակոբյան կողմ
4. Ի. Սահակյան կողմ
5. Ա. Հակոբյան կողմ
6. Յ. Մկրտչյան կողմ
7. Կ. Արարատյան կողմ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Վ. ԳՅՈՒԼԱՄԻՐՅԱՆ